

Ֆերմերային տնտեսությունների ընտրության ընթացակարգը

«Ֆերմերների կարողությունների ու հմտությունների զարգացում» բաղադրիչի շրջանակներում **«Ֆերմերների նորարական և արդյունավետ մոտեցումների ներկայացում-համաժողով»**ին մասնակցելու համար կարող են դիմել այն ֆերմերները, ովքեր ունեն գրանցած արդյունքներ հետևյալ ոլորտներում.

Ֆերմերներն ընտրվելու են համաձայն ստորև նշված չափանիշների, որոնցից որևիցե մեկին կհամապատասխանեն:

- Կենդանիների պահվածք

ա/եռապատ գոմեր,

բ/ կենդանիների սառը պահվածք,

գ/հորթերի պահվածք անհատական հորթավանդակներում,

դ/նոր շինարարական կոնստրուկցիաների կիրառում /Անասնագուս հետևյալ չափանիշներով՝ ավտոմատ ջրախմոց, մեխանիկական գոմաղբի հեռացման համակարգ, օդափոխման համակարգ՝ մեխանիկական և ավտոմատացված, առաստաղի բարձրությունը ոչ պակաս 3մ-ից, ուժեղ բնական լուսավորվածություն, զրոսահրապարակով՝ ցանկապատված տարածքով,

ե/նոր շինարարական կոնստրուկցիաների կիրառում՝ ջերմոցային գոմեր, գ/ավտոմատացված համակարգով կթի սրահ,

է/ տոհմային գործ)

-**Կենդանիների խնամք** (քամհարների կիրառում, էլեկտրական մերսող սարքերի, ռետինե գորգերի կիրառում, դասական երաժշտության կիրառում)

-Կերարտադրություն

ա/նոր ագրոտեխնոլոգիայով անասնակերի մշակություն /հիդրոպոնիկ եղանակ,

բ/ նոր կամ նախկինում մշակված կերային մշակաբույս, որը նոր է շրջանառվել մշակության մեջ/սիլոս և այլն/

գ/ կերային մշակաբույսեր, որոնք որից ստացվել է առավելագույն բերք օր գարի 3-4տ, գյուղտեխիկայով աշխատանքներ

- **Անասնապահության ոլորտում բարձր արդյունքներ գրանցած ֆերմերներ**
ա/կաթնարտադրություն կովերի տարեկան կաթնատվություն առավելագույն սահմանաչափը/ 6000լ և ավել,

բ/ մսի արտադրություն՝ 1 տարեկան ցլիկի առավելագույն քաշը, որը կարող է լինել արհեստական սերմնավորումից ստացված /կենդանի քաշը 500կգ/:

